ՆՈՐ-ԴԱՐ

№ 156 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 26 Հոկտեմբերի **1891** Շաբաթ, 26 Հոկտեմբերի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 156

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիս՝ 6 ռուբլի, երեք ամիս՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կոպէկ: Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ընկերութիւնների համար կրկնապատիկ:

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԱՐՈՍՏԱՆ

Սրանով յայտնում է՞ի գիտութիւն Թիֆլիսի վաճառականների, որ իւր բնակարանում, որը գտնւում է Դվորցովայա փողոցում, վրաց ազն. բանկի քարվանսարայում, Պ. Նահանգապետի թոյլտւութեամբ, ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ յօգուտ Ռուսիայի անբերրիութիւնից վնասուածների. Նուիրատուներին համապատասխան անդորրագրեր կը տրուին:

(232) 2—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

—

Քրոնիկոն լուրեր.—Հայոց Թատրոնի. Հայոց այժմեան գանձերի վիճակն ապագատումանում:

Քաղաքական. քաղաքական լուրեր:

Խառն լուրեր:

Բանասիրական.—Հայ ուսուցիչը:

Հեռագրեր:

Տեղեկատու:

Յայտարարութիւններ:

ՔՐՈՆԻԿՈՆ

Ինչպէս յայտնի է, հոկտեմբերի 28-ին, երկուշաբթի օրը, լրանում է Նորին Կայսերական Մեծութիւնների ամուսնութեան 25-ամեակը: Այդ օրը, «Խերխա»-յի ասելով, բոլոր ուսումնարանների աշակերտները կ'արձակուեն դասերից:

—

«Санктпетербургскія Сенатскія Вѣдомости»-ի մէջ հետևեալ բարձրագոյն հրամաններն են հրատարակուած.

«Թագաւոր Կայսրը 1891 Թուի սեպտեմբերի 19-ին հաճեց հրամայել՝ Էջմիածնի Սինոդի անդամ եպիսկոպոս Սուքիաս Պարզեանցին, որ միևնոյն ժամանակ Երևանի թեմի առաջնորդ էր, և եպիսկոպոս Ներսէս Խուդավերդեանցին արձակել իրենց պաշտօններից»:

«Թագաւոր Կայսրը, Ներքին գործերի մինիստրի ամենահպատակօրէն ներկայացրած զեկուցման համաձայն, 1891 Թուի սեպտեմբերի 19-ին բարձրագոյն հաճեց Էջմիածնի Սինոդի անդամ հաստատել Արիստակէս Սեդրակեան և Գրիգորիս Աղուանեանց եպիսկոպոսներին և Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանին»:

—

Ուրբաթ օրը, հոկտեմբերի 25-ին, Թիֆլիսի կոնսիստորիայում կարդացած արեն Օրբելեանց քահանային, որ գտանւում է Սիբիր աքսորի: Էջմիածնի Սինոդի հրամանի համաձայն Օրբելեանցը առ միշտ զրկւում է քահանայական կոչումից և սովորական մարդ է դառնում:

—

Արևելքի մէջ կարդում ենք.

«Կրօնական ժողովն երէկ *(հոկտ. 8-ին) ի նիստ գումարեցաւ ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեանի:

Ս. Պատրիարք Հայրը ժողովին հաղորդեց Քաղաքական ժողովոյ այն որոշումն, որով հարկ դատած էր խառն յանձնաժողով մը կազմել կաթողիկոսական յաջորդ ընտրութեան առթիւ ընդհանուր ուսումնասիրելու և Վարչութեան հետևելիք ընթացքը ճշդելով տեղեկագիր մը մատուցանելու համար: Ն. Ամենապատուութիւն հրաւիրեց զԿրօն. ժողովն որ իւր կողմէ ևս անուանէ այդ յանձնաժողովի եկեղեցական անդամները: Հետևաբար, Կրօնական ժողովոյ որոշմամբ՝ նոյն յանձնաժողովին անդամ կարգեցան Արժ. Դաբեղեան Ն. վրդ. Թաթարեան, արժ. Մովսէս Ծ. վրդ. Կէօմիւրճեան և արժ. Յովհաննէս Աւագ քահանայ Հէնփէքճեան»:

—

Չորեքշաբթի, հոկտեմբերի 23-ին, վրաց դրամատիկական խումբը բանկի թատրոնում ներկայացրեց Օստրովսկու «Бѣдная невѣста» կոմեդիայի փոխադրութիւնը: Ինչպէս բոլոր պիեսների փոխադրութիւնը, նոյնպէս և ռուսական թատրոնի այդ պիեսի փոխադրութիւնն, ի հարկէ, այն չէր ինչ որ բնագիրը. բայց և այնպէս վրաց հասարակութեան համար այդպէս աւելի յարմար և հասկանալի է, քան թէ ուղղակի թարգմանութիւնը կը լինէր, որովհետև փոխադրութիւնը քիչ թէ շատ վրաց կեանքին է յարմարեցրած: Սակայն այս էլ պէտք է ասած, որ «Бѣдная Невѣста» պիեսի փոխադրութիւնը, որ առաջին անգամն էր ներկայացնում, դժուար թէ աջողութիւն ունենայ վրաց բեմի վրայ, որովհետև այդ փոխադրութեան մէջ բոլորովին չկայ այն, ինչ որ սիրում է թատրոնի հասարակութիւնը—կենդանութիւն, բացի դրանից, գործողութիւնները վերին աստիճանի ձգձգուած են և ձանձրալի: Թատրոնում շատ քիչ հասարակութիւն կար:

—

«Արձագանք»-ին Կ. Պոլսից հաղորդում են, որ «Արևելք» լրագիրը անորոշ ժամանակով դադարեցրած է:

—

Հոկտեմբերի 22-ին քաղաքումս վախճանուեց Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ Կ. Մ. Կոլուբանսկին, որ երկար տարիներ ծառայել էր դատական հասարակական գործերի, վրայ և ռուսաց գրականութեանը և բեմին:

—

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, որ 3 ռուբլիանոց կեղծ թղթադրամներ են երևան եկել, որոնց կեղծ լինելն խոշոր աչքի է ընկնում:

—

ԲԱԳՈՒԻՑ.—Ամերիկական յայտնի նաւթային «Standard oil et C°» հաւաքուած է իւր առևտրի փառաւոր աջողութեամբը, որի հետևանքն եղել է Բագուի կերոսինագործարանների անկումը և գործարանատէրերի սնանկանալը. ուստի մեր կերոսինագործարաններն էլ հրապուրուելով ամերիկական «Ստանդարդ» ընկ. անունից, հիմնել են իրենց ընկերութիւնը Standard et C°de Bakou անունով երկու ամերիկական ընկերութեան հետ մրցելու նպատակով:

—Անցեալները, «Նոր-Դար»-ի ընթերցողներին հաղորդել էինք, որ ցորենը Պարսկաստանից արգելուած է արտահանել Բագուի ցորենից, արգելուելը և բրնձի արտահանութիւնը. որ մէկ ամիս շարունակուեց: Վերջին ժամանակներս պարսիկ բրնձավաճառները մի խնդիրքով հեռագրեցին Շահին որ թոյլ տրուի բրինձ արտահանել Պարսկաստանից: Շահը յարգելով այդ խնդիրքը, նորից թոյլտւութիւն է տուել բրնձի արտահանութիւնը.

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի մի քանի խրատատուներ, «Нов. Об.»-ի ասելով, Թիֆլիսի ու Նահանգապետին բողոք են տուել քաղաքագլխի պաշտօնակատար ալ. Իզմայլեանի ընտրութեան դէմ:

—

ԲԱԳՈՒԻՑ.—Հոկտեմբերի 21-ին կէսօրից յետոյ Բալախանում այրուեցին մօտ 10-ից աւելի շատրուաններ, որոնք պատկանում էին «Դողթան», «Գրիգորիս», «Սահակեանների — Աղամեան» «Թամուրեան» և ուրիշ ընկերութիւններին: Վնասը հասնում է մեծ գումարի: «Դողթան» ընկերութեան վնասն աւելի զգալի է, որովհետև յիշեալ ընկերութիւնը մեծ գումար մսխելով, հազիւ թէ 4 օր էր, որ սկսել էր նաւթ ստանալ:

—Ինչպէս լսում ենք, Բագուից երթևեկող մարդակիր գնացքների ժամանակները փոփոխութեան պիտի ենթարկուեն, այսպէս փոխանակ կէս օրուայ $12^1/_2$-ին դուրս գնալու, պիտի գնացքն այստեղից դուրս գնայ երեկոյեան ժամը 10-ին, իսկ երեկոյեան փոխանակ ժամը $6^1/_2$-ին գալու, պէտք է գայ առաւօտեան ժամը 9—10-ին: Այդ նոր փոփոխութիւնը, որ պիտի կատարուի նոյեմբերի 1-ից, մեծ դիւրութիւն պիտի տայ ուղևորներին, որովհետև յարմար կլինի ուղիղ հաղորդակցութեան շոգենաւով եկող—գնացողների համար:

—

Փիր գիւղից (Գանձակի գաւառ).—Հոկտեմբերի 9-ին մի 15 տարեկան պատանի, Վարդան Երէցեանց անգանունով, իւր հօր եզները տանում է, որ արածեցնի. երբ մօտենում է Նաճքուռ գետին, բռնում է մի եզան պոչից և քշում է ջրի միջով, որպէս զի անցնի գետի միւս ափը, բայց հենց, որ եզը հասնում է ջրի մէջ տեղը, պատանին բաց է թողնում եզան պոչը և ընկնում է ջրի մէջ. խեղդւում և եզ խեղդւում է: Խեղդուածի դիակը նոյն օրը գտան և ջրից հանելով թաղեցին:

—Բանի գնում է, գողութիւնները մեր գիւղում շատանում են և եթէ սրա առաջը չառնուի, ամառը գալուց աւելի վատթար գողութիւններ կը լինին: Մեր գիւղից մօտ եօթ վերստ հեռաւորութեամբ գտնուող Ամրուար կոչուած գիւղի թուրքերը մօտ օրերս 9 գոլթանի բնաւեն աւուած չղթան, որ ամեն մէկը 7 ր. արժէր, մի քանի խոփ և մի քանի եզներ գողացան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԸ*)

(Վերջ)

—

Գ.

Տան ներսն անտանելի շոգ լինելով, գիշերն Ամիրեանը դուրս, թախտի վրայ պառկեց քնելու: Լուսամուտը, որի առաջ դրուած էր թախտը, բաց էր: Այդ լուսամուտի առաջ, ներսը, դրուած էր սեղան, որի առաջ նստած էր Վարդանէն և գիրք էր կարդում: Արդէն ուշ գիշեր էր: Տանն ամենքը քնած էին, բացի քոյր ու եղբօրից: Եղբայրն անկողնում անշարժ "պառկած" անթարթ աչքով նայում էր քրոջը: Վարդանէն, թէև գլուխը չէր բարձրացնում գրքի վրայից, բայց զգում էր, որ եղբայրը նայում է իրեն և իւր մասին է մտածում. բայց և ինքն էլ եղբօր մասին էր մտածում և այդ պատճառով կարդացածը մեքենայական բան էր, որից ոչինչ չէր հասկանում: Վերջապէս նա գլուխը բարձրացրեց գրքի վրայից և նայեց եղբօրը:

—Դու քնած չե՞ս, Բագրատ,—հարցրեց նա կամաց:

—Քունս չի տանում,—պատասխանեց Ամիրեանը:

—Ցա՞ւ ես զգում:

—Ամենևին: Միայն հոգիս խաղաղ չէ:

Վարդանէն արմունկներով պառկեց լուսամուտի վրայ և գլխի դուրս թեքուեց:

—Երևի, շարունակ մտածում ես, որ քեզ հետ այդպէս անարդար կերպով են վարուել,—ասաց նա բոլորովին կամաց:

—Է՛հ, ի սէր Աստուծոյ, այդ մասին մի խօսեցնիր,—պատասխանեց Ամիրեանը, գլուխը հակառակ կողմը թեքելով:

Վարդանէն խելամիտ հասկացաւ այդ մասին ոչինչ չհարցնել նրան: Նա անհուն վշտով ու կարեկցութեամբ նայում էր եղբօր նիհար, մաշուած դէմքին, որի վրայ բաց լուսամուտից ընկած էր սեղանի վրայ վառուող լամպի լոյսը: Ինչքա՜ն փոխուել էր այդ մի ժամանակ այնքան ջինջ և լիք թուշ դէմքը. ուր էր այդ համակրելի դէմքի այն պայծառ ժպիտը, որ նրա մանկական մաքուր հոգու պարզութիւնն ու վսեմ ձգտումներն էր արտացոլացնում. այդ ժպտի միայն վերջին նշոյլն էր մնացել, այլանդակուած նշոյլը՝ նման իւր սպառած ճրագի դժգոյն լոյսին, որ հազիւ առկայծում է և վայրկեան առ վայրկեան աղօտանում, թւում է, թէ ահա խոյն պէտք է մարէ, չքանայ...

—Բաս բժշկուելու չմնա՞ք է գնաս,—հարցրեց նա կարճ լռութիւնից յետոյ:

—Ինչո՞վ գնամ,—առանց նրան նայելու հարցրեց Ամիրեանը:

Վարդանէն մեքենայաբար ուղղեց նրա վերմակը:

—Ես փող ունեմ հաւաքած...կը տամ,—ասաց նա:

Եղբայրը գլուխը դէպի նա դարձրեց և զարմացմամբ նայեց նրա աչքերին:

—Մի՞թէ դու այնքան ստանում ես, որ հաւաքում էլ ես,—հարցրեց նա:

—Ինչո՞ւ չէ... չէ՞ որ ես կար էլ եմ անում...

—Կար... ինչ կար...

—Ով գիտէ... ինչ պատահում է... ուրիշից եմ վերցնում:

Մի ինչ-որ սուր զգացմունք ճնշեց Ամիրեանի հոգին: Միաժամանակ կարեկցութեամբ, յուսահատութեամբ և զարմանքով նա մնաց լուռ նայելիս քրոջ հանգիստ և խաղաղ դէմքին:

—Մօտ հարիւր ռուբլի ունեմ հաւաքած, քեզ կը տամ, գնա առողջացիր,—ասաց Վարդանէն:

—Ներքեմ, — յանկարծ կատաղութեամբ կանչեց Ամիրեանը և բոլորովին շուռ եկաւ քրոջ հակառակ կողմը:

—Բագրատ—աշխատանքով ստացածից քոյրս:

—Ներքեմ,—կրկնեց եղբայրը: Վարդանէն հասկանում էր նրան, ուստի նա այլ ևս ոյժ չունեցաւ, չհամարձակուեց թախանձել:

—Ես պէտք է քո աշխատանքի վաստակով գնամ առողջանալու,—կարճ լռութիւնից յետոյ շարունակեց Ամիրեանը:—Այդ որտեղի օրէնք է, որ եղբայրը քրոջ աշխատանքից օգուտ քաղէ:

—Դու ինձ զարմացնում ես, Բագրատ. ինչ մի անօթ բան է, որ եղբայրը քրոջ աշխատանքից օգուտ քաղէ:

—Ես չեմ ուզում օգուտ քաղել:

—Հապա որ դու ինձ վրայ այնքան աշխատանք ունիս...

—Լռի՛ր, ի սէր Աստուծոյ,—զզուանքով ընդհատեց քրոջն Ամիրեանը,—դու ինձ բարկացնում ես...

Վարդանէն կոտրած սրտով նայեց նրան:

—Հապա ի՞նչ պէտք է անես,—հարցրեց նա:

—Այն կանեմ, որ կը գնամ թեմական տեսչի մօտ և կը պահանջեմ այն, ինչ որ ինձ է պատկանում, իսկ եթէ նա այս անգամ արդէն դէմ առ դէմ կը մերժէ և ուղղակի կը համարձակուի երեսիս ասել, որ ես ըմբոստ վարժապետ եմ, այն ժամանակ... ես գիտեմ:

—Բագրատ, սիրելիս, գիտես, որ զրպարտել ոչինչ չի լինիլ և դու ի զուր դարձեալ պէտք է վրդովուես: Թող այդ անգութներին և մի մերժիլ առաջարկս...

Ամիրեանը վեր թռաւ և նստեց անկողնի վրայ:

—Թողնե՞մ, ասում ես դու,—համարեա գոռաց նա:—Ես ի՞մն եմ պահանջում, հասկանում ես դու, թէ ոչ... ես ողորմութիւն չեմ խնդրում... մի՞թէ օրէնքով ինձ հասանելիքն էլ չեն տալ:

—Տեսնում ես, որ ոյժը նրանց կողմն է:

—Ես օրէնքի կը դիմեմ, այսպէս—ով:

Ամիրեանը հրացայտ աչքերով ցոյց տուեց բռունցքը:

—Ա՜խ, ինչպէս դու չես խղճում քեզ—մեզ, տխրութեամբ պատասխանեց Վարդանէն:—Լսիր, Բագրատ,—աւելացրեց համոզող ձայնով.—դու հիւանդ ես. ամեն մի յուզմունք քեզ համար

(*Տե՛ս «Նոր-Դար» № 155

Գիւղացիները մնացին առանց վար անելու։ Մտադիր են այս մասին ուր հարկն է իմաց տալու։

Գիւղումս տարածուած է անասունների ցաւը որ շատ զոհեր է տանում։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Մեր քաղաքային խորհուրդը իւր վերջին նիստում որոշեց 1,000 րուբլի յատկացնել այստեղ եկող ռուս գաղթականների և 5,000 րուբլի անբերրիութիւնից վնասուած նահանգների բնակիչների օգտին.

—

Հոկտեմբերի 26-ից մինչև նոր կարգադրութիւն լինելը Թիֆլիսի վաճառանոցներում կենսական մթերքների գները հետևեալներն են։

Հացի գինը. փռնում թխած, 1-ին տեսակը ֆունտը 5 կ., 2-րդ տեսակը 3 կ., 3-րդ տեսակը 2½ կ.։ Թոնրում թխած 1-ին տեսակը ֆունտը 5 կ., 2-րդ տեսակը 3½ կ., 3-րդ տեսակը 3 կ.։ Լաւաշը 1-ին տեսակը ֆունտը 7 կ., 2-րդ տեսակը 4 կ.։

Մսի գինը. տաւարինը ֆունտը 6½ կ., սուկին 12 կ., ոչխարի միսը 7 կ.։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, հոկտեմբերի 24-ին հայոց դերասանական խումբը Թիֆլիսի Արտիստական Թատրոնում խաղաց Շեքսպիրի «Մի կնոջ սանձահարումը» 5 արարուածով կոմեդիան, թարգմանութիւն Ա. Մանդինեանի, որի համառօտ բովանդակութիւնը հետևեալն է։

Բարտիստա Մինոլան (պ. Աբրահամեան) Պադուայի մի հարուստ ազնուական է, որ ունի երկու աղջիկ, Կատարինէ (Տ. Սիրանոյշ) և Բիանկա (Տ. Մելիքեան)։ Առաջինը վերին աստիճանի չար, կամակոր, կռւարար՝ անպատկառ մեծ բանիւ մի անզգամ աղջիկ է. երկրորդը, ընդհակառակը համեստ, պարկեշտ, ամօթխած և առաքինի։ Ցայտնում են երկու փեսացուներ. Պետրուչիօ, Վերոնայի մի ազնուական (պ. Պետրոսեան) և Լուչենցիօ, Պիզայի ազնուական (պ. Արմենեան)։ Պետրուչիօն իմանալով հանդերձ Մինոլայի աղջկայ՝ Կատարինէի չար, կռւարար և անզգամ բնաւորութիւնը, այսուամենայնիւ խնդրում է նրա ձեռքը նրա հօրից. և մինչդեռ վերջինս տարակուսում է տալ իւր համաձայնութիւնը, որովհետև խնայում է ազնուական երիտասարդին, և մինչդեռ ծանօթներըն ու բարեկամները խելագարի մէկըն են համարում Պետրուչիօյին, որ գիտակցաբար է՝ այդպիսի մի փչացած աղջկայ հետ ամուսնանալ, ինքը Պետրուչիօն, ընդհակառակը, վստահ լինելով իւր քաջութեան վրայ, որոնցով զինուած նա պիտի կարողանայ կոտրել իւր հարսնացուի կամակորութիւնը և նրանից մի համեստ և հլու կին դարձնել, պնդում է իւր առաջարկութեան վրայ։ Հայրը համաձայնւում է, միայն վերջնական որոշումը թողնում է իւր աղջկայ վրայ։ Պետրուչիօն միայնակ մնալով Կատարինէի հետ, հենց առաջին տեսակցութիւնից սկսում է իւր «սանձահարումը»։ Չնայելով որ թէ՛ առաջարկութիւն արած ժամանակ և թէ հասարակ զրոյցներ անելիս Կատարինէն խելագար կնոջ վայել կոպտութեամբ ու կատաղութեամբ է պատասխանում իւր փեսացուին և մի մի անգամ էլ փախուկ ապտակներ է իջեցնում նրա երեսին. այսուամենայնիւ Պետրուչիօն չի յուսահատւում և սկսում է երբեմն մեղմ և երբեմն խիստ հետամտութեամբ համաձայնեցնել Կատարինէն իւր առաջարկութիւնըն ընդունելու։ Չնայելով որ իւր հօր, Բարտիստա Մինոլայի և այլ հիւրերի ներկայութեամբ Կատարինէն դարձեալ հրաժարւում է Պետրուչիօյի առաջարկութիւնը ընդունելուց, այսուամենայնիւ Պետրուչիօն պնդում է, որ նա ընդունել է այդ առաջարկութիւնը իրենց միայնակ եղած ժամանակ։ Մեծ բանիւ կամակոր Կատարինէից առաւել կամակոր այս ազնուականը՝ զոռով Կատարինէի փեսացուն է դառնում, նշանւում և պսակւում է նրա հետ. բոլոր այս պատմութիւնների ժամանակ սիստեմատիքաբար ճնշելով, նրա անհնազանդութիւնը, կամակորութիւնը և յամառութիւնը։ Հարսնացուն իւր իշխանական տունը տանելով, Պետրուչիօն այդտեղ էլ շարունակում է իւր կրթութիւնը. Կատարինէին ամբողջ օրով քաղցած է պահում, չէ թողնում նրան քնել, և ծառաների հետ ունեցած զոռում գոչումներով սարսափով լցնում է հարսնացուի սիրտը, թէպէտ բուն երևոյթին մէջ քաղաքավարի է վարւում նրա հետ։ Այս բոլորի հետևանքը լինում է այն, որ Կատարինէն իւր հօր տան մէջ ունեցած բոլոր քաջութիւնը «դնում է պարկի մէջ» և դառնում է իւր ամուսնու հլու և հնազանդ ամուսինը։

Մինոլայի բարի և առաքինի աղջկայ Բիանկայի փեսացուն դառնում է Լուչենցիօ ազնուականը, որը նրա ձեռքը ոչ թէ ուղղակի նրա հօրից է խնդրում, այլ իբրև սուտ վարժապետ մտնում է Մինոլայի տունը, ժամանակ է գտնում Բիանկային սիրոյ խոստովանութիւններ անելու և նրան իւր վրայ սիրահարեցնելու։ Յետոյ նրանք ամուսնանում են իբրև սիրահարներ։

Վերջին արարուածի մէջ հեղինակը իւր հերոսներին ու հերոսուհիներին համար մրցման հանդէս է սարքում։ Խնճոյքի սեղանի շուրջը նստած են Պետրուչիօն և Լուչենցիօն իրենց ամուսինների Կատարինէի և Բիանկայի հետ, Գորտենզիօն (Ազգայեան), որ առաջ Բիանկային էր ուզում, իսկ այժմ ամուսնացել է մի այրի կնոջ (օր. Վարդուհի) հետ, որը նոյնպէս ներկայ է այդտեղ. և վերջապէս դրանց սեղանակից են Բարտիստա Մինոլան, Լուչենցիօի հայրը և այլն։ Այստեղ ակնարկութիւններ են լինում Պետրուչիօյի կնոջ վերաբերմամբ։ Պետրուչիօն վիրաւորուած Լուչենցիօյին և Գորտենզիօյին նոյնպիսի ակնարկութիւններով է պատասխանում։ Երեք կանայքն էլ վշտանալով հեռանում են սեղանից։ Վիճաբանութիւնը շարունակւում է։ Պետրուչիօն առաջարկում է իւր քենիներին Լուչենցիօյին ու Գորտենզիօյին՝ որ իրենցից իւրաքանչիւրը փորձէ իւր կնոջ հնազանդութիւնը և ապա թէ համարձակուի միւսի մասին ակնարկութիւններ անել։ Այս առթիւ նրանք գրազ են բռնում որ մարդու հրամանին բակոյն և եթ հնազանդուող կնոջ ամուսինը հարիւր կրօն վճարէ հնազանդւողի ամուսնուն։ Եւ մինչդեռ բոլոր բաղձականները, ընդ որս և Լուչենցիօն ու Գորտենզիօն համոզուած են որ գրազը պիտի տանեն, սակայն Պետրուչիօն, որովհետև նրա կինը Կատարինէն բոլոր աշխարհին յայտնի կամակորն մէկն է, փաստը հակառակն է ցոյց տալիս։ Լուչենցիօյի և Գորտենզիօյի կողմից կանանց կանչելու համար ղրկուած ծառաները վերադառնում են առանց որ նրանց կանայքը մերժում են ամուսինների խնդիրը, և չեն գալիս իրենց մօտ. մինչդեռ Պետրուչիօյի հրամանը տանելուն պէս Կատարինէն հնազանդւում և գալիս է ամուսնու մօտ։ Բոլորը մնում են ապշած։

Սակայն Պետրուչիօն այդ յաղթութեամբ չէ բաւականանում. նա հրամայում է կնոջը համոզել և բերել դահլիճ նաև իւր անհնազանդ ընկերուհիներին, որը և կատարում է նա աչքաթողութեամբ։ Յետոյ այդ բոլորի ներկայութեամբ իւր կնոջ անսահման հնազանդութեան մի քանի ուրիշ ապացոյցներն էլ տալով Պետրուչիօն խնդրում է կնոջը հասկացնել իւր անհնազանդ քրոջն ու ընկերուհուն իրենց պարտաւորութիւնը, որը և նա կատարում է խոկոյն, ընդ նմին և մի գեղեցիկ ճառով բացատրելով նրանց կնոջ իւր մարդուն հնազանդ և հլու հպատակ լինելու կարևորութիւնը։ Սրանով վերջանում է Շեքսպիրի «Մի կնոջ սանձահարումը», որը հեղինակի շատ աջող երկերից մինն է, թէպէտ, և նրա միւս գրուածքների նման, սա էլ հարուստ է հանճարեղ մտքերով, սրամիտ ասացուածներով, երգիծաբանութեամբ և հումորով։ Պիեսը ընդհանրապէս, իւր ամբողջութեան մէջ ծայրայեղ զուարթութիւններ շատ է ներկայացնում. Նրա թէ՛ հանգոյցը, թէ՛ զարգացումը և թէ՛ լուծումը տարօրինակ և բանագրաւիկ միջոցներով են կատարւում։ Այս տարօրինակութիւնների շատերը, 'ի հարկէ, ներւում են դասական գրուածքներին, երբ որոշ ժամանակի որոշ ծնունդներ։ Այդ պատճառով ոչ ոք չէ գտնում այն՝ որ հանճարեղ հեղինակը իւր ստեղծագործութեան մէջ կինը՝ անպատճառ ամուսնուն տալու եղծելով առաջնորդուած հասնում է այդ նպատակին խիստ միակողմանի ճանապարհներով, առանց հաշուի առնելու հասարակութեան ճաշակը և այն հանգամանքները, որոնք կարող էին ծնունդ առնել կինը՝ անպատճառ ամուսնու կամեցած ժամանակ։ Կան գրուածքներ, որոնց արժանաւորութեան մասին քննադատների անգամ աշխատել են խօսում, որովհետև հեղինակի հաւակը նախապաշարում է նրանց։ «Մի կնոջ սանձահարումը» այն բազմաւոր գրուածքներից մինն է...

Բայց ինչ որ էլ լինի, Հայոց բեմի վրայ այդ կոմեդիան ներկայացնելը, մեր կարծիքով, շատ նպատակայարմար է։ Կային մարդիկ, որոնք հակառակն էին պնդում. մենք 'ի հարկէ, չենք խառնւում նրանց խրատներին։ Բայց թէ ինչու մենք «նպատակայարմար» ենք գտնում, դրա պատճառները շատ են, որոնց, սակայն, թուել և բացատրել այժմ չի ներում մեզ ժամանակի սղութիւնը։ Այսքանը միայն կասենք, որ ժամանակակից, բայց միանգամայն աղաւաղուած դաստիարակութեան շնորհիւ այժմ այնպիսի կեղծաւորանափոխութիւններ են մտել հայ ընտանիքների մէջ, ամուսինները այնպէս փոխել և այլանդակել են իրենց դերերը, տղամարդիկ այնքան նուաստացել և սիրած կանանց հաճոյքների երկրպագուն են դարձել, որ կարելի է վերջապէս անմահ Շեքսպիրի կոշտ-կոպիտ խարազաններով ծարուածել և սթափեցնել երբեմն նրանց թմրած ուղեղները։ Ճշմարիտ է մեր աղջիկները կատարինէներ չեն... քանի որ դեռ հարսնացուներ են. բայց դրանց հարիւրից հազիւ մէկն է ամուսնու Բիանկա մնում... իւր ամուսնու տանը։

Պիեսայի թարգմանութիւնը չենք կարող ասել թէ հայերէն չէր. բայց հազիւ թէ մի ուրիշ թարգմանութեան մէջ այնքան անճոռնիութիւնների պատահած լինէինք, որքան «Մի կնոջ սանձահարման» մէջ։ Անկարելի է որ յանցանքը դերասաններինը չլինէր. որովհետև պ. Մանդինեանը ինքը, ինչպէս պատմում էին, չէր ճանաչում իւր թարգմանութիւնը։ Դերասաններից շատերը իրենց դերերը բոլորովին չգիտէին. այդ պատճառով էլ հայոց լեզուն հոգով մարմնով նահատակեցին. Արդեօք դարձեալ հարկաւոր է կրկնել որ դերասանի առաջին գործը դերը լաւ սովորելն է. չէ որ խաղի գլխաւոր աջողութիւնը դրանից է կախուած։

Դալով դերասանների խաղին, համեմատական հաջուով ամենից գերազանցը Տ. Սիրանոյշն էր. ապա Պ. Պետրոսեանը, որը, այնուամենայնիւ, բոլոր ժամանակ երգելով էր խօսում։ Պ. Թուրեանը շատ ծիծաղեցրեց մեզ նոյն իսկ իւր չափազանց դերով։ Պ. պ. Տէր-Դաւթեան, Արելեան, Ազգայեան, Վրոյր, և Արմենեան վատ չտարան իրենց գործը։ Մ. Մելիքեանը Բիանկայի դերում՝ իւր փոքրից ծծելու ժամանակ՝ շատ լաւ էր. բաւական աչքի ծեծ կերաւ, բայց մնացած տեղերում թոյլ էր։

Խաղը ընդհանրապէս սառն անցաւ։ Շատ տեղերում մինչև անգամ ձանձրալի։ Այդ կոմեդիան խիստ աշխուժով ու կենդանի խաղացած ժամանակ միայն կարող էր յաջողուել։ Մերոնք ընդ-

---

շատ վնասակար է. եկ առ այժմ թող այդ բանը, գնա առողջացիր և յետոյ արի ինչ ուզում ես արա։

—Ի զուր ես խօսում, Վարօ, ես քեզանից մի կոպէկ անգամ չեմ առնիլ,—հանգիստ, հաստատ ձայնով ասաց Ամիրեանը և նորից պառկեց։—Գնա քնիր։

—Դու յամառութիւն ես անում։

—Է՛հ—գրգռուած արտասանեց Ամիրեանը։

Վարվառէի աչքերում արտասուքի կաթիլներ երևացին։

Երկար ժամանակ ծանր լռութիւն տիրեց։

—Ես գիտեմ խօ. թէ ինչու դու չես ուզում ինձնից փող առնել,—ասաց Վարվառէն հանգիստ ձայնով, որի մէջ վիրաւորանք և յանդիմանութիւն էր լսւում։—Հպարտութիւնդ չէ ներում։ Բայց դա անմտութիւն է, և դու չես մտածում, որ քո առողջութիւնը, կեանքը հարկաւոր է մեզ—ինձ, մայրիկին, երեխաներին։ Ինչ պէտք է լինի մեր դրութիւնը, եթէ,—մ՛ն, Աստուած մի արասցէ,—եթէ...քեզ մի բան պատահի... Մենակ ես կարո՞ղ եմ մի ահագին ընտանիք պահել...և մի՞թէ դու չէիր ցանկանալ առողջանալ և օգնել քրոջդ... Ներիր, որ ես քեզ հետ այսպէս պարզ և գործնական տեսակէտից եմ խօսում, բայց հենց դրանում էլ բարոյականն է, որ դու առանց իմ ասելու էլ պէտք է հասկանում լինէիր։ Եթէ դու եղբայր ես և սիրում ես ինձ, չպէտք է մերժես առաջարկս։

Ամիրեանը ձայն չհանեց. քրոջ բերած պատճառաբանութիւնն այն աստիճան զօրեղ էր, որ նա պատասխանելու համար ոչ մի խօսք չգտաւ. նրա յամառութիւնը յանկարծ կոտրուեց. այս անգամ նա ոչ թէ միայն առիթ չէր գտնում գրգռուելու քրոջ դէմ, այլ, ընդհակառակը, նրա առաջարկն ընդունելը մի տեսակ պարտականութիւն էր ներկայանում նրա համար. Բայց և այնպէս նա ասաց.

—Ես դեռ յոյս ունիմ, որ իմս կը ստանամ։

—Ո՞վ է ասում, թէ մի ստանար, բայց դա ուշ կը լինի։ Իսկ քեզ հարկաւոր է, որ որքան կարելի է շուտ գնաս առողջանալու։ Գլխաւորը՝ քեզ հանգստութիւն է հարկաւոր, իսկ դու, պարզ տեսնում եմ, որ ամեն մի չնչին բանից իսկոյն գրգռւում ես։

—Չեմ գրգռուիր։ Վաղը կը գնամ, կուզեմ, եթէ պահանջս իրաւացի կը համարեն, խօ լաւ, իսկ եթէ ոչ...

—Կընդունես առաջարկս,—ասաց Վարվառէն։

Ամիրեանն աղերսանքով նայեց քրոջ դէմքին։

—Վարօ ջան,—արտասանեց նա անհուն սիրով և քնքշութեամբ, ինչպէս երբեք չէր խօսել քրոջ հետ.—խնդրում եմ մի նեղանալ ինձնից. արդէն ուշ է, գնա քնիր. իսկ այդ մասին վաղը կը խօսենք։

Վարվառէն շուտ վերկացաւ թոռմուսի մօտից և հեռացաւ։

—

Հետևեալ առաւօտեան Ամիրեանը գնաց թեմական տեսչի մօտ և երբ վերադարձաւ, նրա չորացած դէմքի ջղերն այն աստիճան ուռած, կարմրած էին, աչքերն այնպէս պսպղում էին, որ Վարվառէն նրան նայելուն պէս իսկոյն հասկացաւ, որ բանն անաջող է անցել և եղբայրը սաստիկ գրգռուել է։

Քոյրն երկիւղով և անհանգստութեամբ լուռ նայեց եղբօր դէմքին, եղբայրը նոյնպէս նայեց քրոջ դէմքին և շուռ եկաւ, որպէս զի անզօր կատաղութեան արտասուքը ծածկէ քրոջից։

—Ես քեզ ասում էի, որ թողնես այդ անգութներին,—ասաց Վարվառէն.—տեսնում ես, դու սաստիկ գրգռուել ես։

—Եթէ ատրճանակ ունենայի մօտս, անպատճառ կը սպանէի նրան,—ասաց Ամիրեանը, աշխատելով որքան կարելի էր հանգիստ ձայնով խօսել—Բացարձակ, անտարբեր կերպով պաշտպանել հոգաբարձուներին և հալածել ուսուցչին,—դա քամահելի է... Անիծուած հայ ուսուցչի պաշտօնը, անիծուած...

Վարվառէն այդ մասին այլ ևս ոչինչ չհարցրեց, որպէս զի առիթ տուած չլինի նրան գրգռուելու, և միայն մի քանի ժամից յետոյ, երբ եղբայրը հանգստացաւ, քոյրը կամաց հարցրեց նրան։

—Ուրեմն ընդունում ես առաջարկս։

Ամիրեանն ոչինչ չպատասխանեց և ոչ նայեց քրոջը։ Նա զգաց, որ մի բան յանկարծ վեր նետուեց դէպի կոկորդը, ուզեց փակել քրոջ պարանոցը և նրա սիրող կրծքի վրայ արտասուքի հետ դուրս թափել իւր սրտի վրայ ծանրացած բոլոր մաղձը... Բայց ամօթը զսպեց նրան—տղամարդի ամօթը կնոջ առաջ...

Նրա լռութիւնից քոյրը հասկացաւ, որ նա հակառակ չէ իւր առաջարկութեանը և լուռ հեռացաւ։

Ե.

Այդ օրից մօտաւորապէս երկու տարի յետոյ, Ամիրեանը նստած էր իւր գրասեղանի առաջ և իւր՝ չափ պաշտօն ունեցող ընկերներից մէկին հետևեալ նամակն էր գրում.

«Նամակիդ պատասխանում եմ անմիջապէս։ Դու յանդիմանում ես ինձ, որ թողել եմ ուսուցչական «վսեմ» պաշտօնը և հաշուապահի մասնաւոր պարապմունք եմ ձեռք բերել։ Շատ ցաւալի բան է դուրս գալիս, երբ մարդ գործից հեռու կանգնած, գործին ծանօթ չլինելով, նրա մասին դատողութիւններ է անում և խրատներ է տալիս այն մարդուն, որ եփուել է այդ գործի մէջ. բայց արդէն ցաւալի չէ, երբ այդ դատողութիւններ և խրատներ տալուն ընդունակութիւն ունի գործին կենսափորձը վերաբերուելու, խնկաւորն պատճառ գանելու, բայց երեն—հոգ չէ թէ թղթի վրայ—իդէալիստ հասարակութեան շահերը պաշտպանող, մ՛ղ գլխէ, ցուցէ և հայրենասէր ցոյց տալով հանդերձ այդպէս չէ վարւում և ի՞ զուր անցի է տալիս բարոյապէս գրգռուելու, վիրաւորուելու նրան, որը իւր, չեմ ասում ամբողջ տարիներ, կամ մի տարուայ, կամ մի ամսուայ, այլ թէկուզ հենց մի օրուայ գործունէութեան մէջ գուցէ հազարապատիկ աւելի օգուտ է տուել հասարակութեանն, ազգին, քան ինքը իւր ամբողջ կեանքում թղթի վրայ գեղեցիկ փրազներ գրելով։ Ներիր, եթէ փոքր ինչ խիստ եմ դէպի քեզ, բայց ես՝ ուսուցչական պաշտօնը թողնելով և անիծելով այդ պաշտօնը չափից դուրս արդարացի եմ համա-

հակառակը կարելոյն չափ պանդագ և յամրաքայլ առաջ մնալան խորհրդ Թատրոնում այս երեկոյ մի քանի շարք բազմաթուններ և բազմաթիվ օթեականները դատարկ էին։

Շ.

ՀԱՅՈՑ ԱՅԺՄԵԱՆ ԴՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ *)

(Նամակ Պարսկաստանից)

—

(Վերջ։)

Երկար տարիներէ ի վեր սովորութիւն է եղած այստեղի հայերի մէջ հայ աղջիկ տալ արտաքսմանից եկած այլազգիների՝ անգլիացիների, Ֆրանսիացիների, խառացիների, ամերիկացիների և նաև հրէաների և այլն։ Եթէ այդ ջղանում ժողովուրդը կատարեալ անգիտակցութեան և կրօնական անձնուրացութեան (abnégation) մէջ էր խարխափում, երբ գուցէ մեզ եկած օտարազգիներից եկած վայրէն սկզբներից կախարդուած՝ յայտնապէս ազգութիւնը և հաւատքն էր վտանգում առանց հասկանալու դրա հրէկատը անհեթեթութիւնը՝ բայց ինչ էին շինում այդ ժամանակուայ առաջնորդները, որոնք լոյս էին տալիս այդպիսի բացարձակ հակազգային և հակակրօնական գործողութիւններ... Շատ ցաւալի է, նա մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր չկայ ոչինչ բռնադատութիւն, ոչինչ կաշկանդումն ոչ մէկի երանութի վրայ։ Համեմատարար էլի լաւ երևոյթ է հմի այլազգիների հետ ամուսնութիւնը կատարուում էր հայոց եկեղեցում, այդ էլ նրա համար, որ բացի մեր եկեղեցուց՝ ուրիշ դաւանութիւնների եկեղեցներ գոյութիւն չունէին։ Սակայն ինչ կ'ասէք, որ մեծ մասամբ եկուոր այլազգիները հայ ժողովրդից դրամի գոյութեան համար կանայք կամ օրիորդներ էին պատրում իրենց մօտ, առանց օրէնաւոր ամուսնութեան, լոկ գործակցութեան համար, և բաւական տարիներ միասին կենակցելուց յետոյ՝ ձգում էին ի տատ բաղդի և կեանքի ալիքների։ Դա է պատճառը, որ այսօր մենք ունենք Թատրիզում ասորեհաստատակ, անգլիահաստատակ, Ֆրանսիահաստատակ և ռուսահաստատակ հայեր։ (Պէտք չէ չխոթել նրանց հետ, որոնք առանց ամուսնութեան

---

*) Տես «Նոր-Դար» № 155։

լոկ եկած օտարազգիներն են)։ Դեռ Նորագոյն ժամանակներում այն օրիորդ Գրէնֆիլդը, որ քրդստանով կամ մահմէդական կրօնի ընդունելով՝ մեծ ազգային քաղաքական նշանակութիւն ստացաւ և ինչ գործեց՝ ամենքին յայտնի է։ Նոյնպէս և դաբեան դպրեվանքի հայ ընտանիքի և հայրը՝ հրէայ է անգլիահպատակ, որ երկար տարի տպրել է Թաւրիզում։ Օրիորդը, այժմ բոլորովին ընդունած մահմէդական կրօնը՝ իւր լուսանկարը պատկերներն է տիրում Պարսկաստանի զանազան քաղաքները, նկարուած այլ և այլ հագուստներով՝ եւրոպական, քրդական, պարսկական և հայկական և զանազան դիրքերով։ Այդ միջազգային աշխարհասատան օրիորդի հայրը, մրսիէօ Ադամը Թատրում է հայոց ս. Աստուածածնայ գերեզմանատանը։ Իսկ նրա մայրն էլ՝ Սօսէ-Բուլղարի պաշտօնից և եւրոպական հիւպատոսների վերապատնէրից յետոյ՝ վերադարձել է Թաւրիզ և ապրում իւր Թշուառ վիճակը։

Այդ սիսկ առևանդութեան դէպքեր չունա անգամ են պատահել Ատրպատականում, բայց երբ պոհը եղել է հայ օրիորդ և սրբազան Մխիթարեանցն է միջամտել գործին, մի չարաթ կամ երկու շարաթ չի տևել, որ նա բաւականութիւն չստանար բարձրագոյն իշխանութիւնից և ազգկան չտանէր իւր Աննուհներին։

Մարդուս մէջ, չերաւի, սարսափ և զզուանք է յարուցուում երբ մտնում ես Հայոց գերեզմանատները, որոնք ներկայացնում են գրեթէ մի հանդիսարան այլասեռ, այլակրօն, այլազգի պեսիների չերմներին... Աբգանագրութիւնները՝ և՛ լատինական և՛ խառնական և՛ գերմանական և՛ Ֆրանսիական և՛ ռուսական և՛ վրացերէն և՛ պարսկական... Մեռեալ մահկանացուների միջազգային գերեզմանատան ցուցանդէս...։ Եւ որ ամենացաւալին է՝ այդ լեզուների գերեզմաններ նոյն իսկ հիպոցեների մէջ։ Եւ այս խառնածին յոռի զոյզ կենցաղավարութեան պատուղը այն է, որ ներկայումս ակրում է մի կատարեալ անկրօնութիւն, բացայայտ արհամարհանք դէպի ազգային լեզուն և ազգային կրօնը և մի հոգեկան հակումն դէպ ի այդպատեան աւազերական ընկերութիւնները, որոնց աւետարանական գործը, չնորհիւ սոյն հանգամանքների, առաջ է գնում պարսկահայոց մէջ մի աննդային արագութեամբ։ Այս տարի էլ ամերիկական բողոքական միսիոնարական ընկերութիւնը գնել է Թաւրիզում հայի կալուածքներ, բուն հայութեան կեդրոնում և հսկայական կերպով կանգնել երկու վարժարան շինութիւններ, մի եռայարկ հսկայաչէն գպրոց և մի ընդարձակ եկեղեցի։ Ասում են, որ եւրոպական ճաշակով շինուած գեղեցիկ գպրոցը յատկապէս օրիորդների համար է։ Ուրեմն, Թաւրիզեցի ակլեն—մայրեր, աչքերնիդ լոյս, բարով ձեր ազջիկներին ուղարկէք միսսը Վիլսոնի մօտ, որ նրանից սկզբուն, զուտ եւրոպական առագանութեամբ հնչած ջարդ ու փշուր հայերէն սովորեն, ուսում, կրթութիւն ստանան, գնչերները քունը կոտրեն և երգեհոնի ներդաշնակութեամբ գեղարուեստով, պարով ժամանակ անցկացնեն և վերջը պատկուեն ասորների հետ։

Բայց վերոյիշեալ ախտից, որի հետևանքն է բացարձակ խառնածնութիւն և ազգային—անհատական ինքնուրոյն ախտարի եղծանում, կայ և մի ուրիշ հասարակական վնասակար ախտ էլ՝ ոչ պակաս դատապարտելի. դա էլ չհաս ամուսնութիւնն է։ Կարելի է համարձակ ասել, որ Թաւրիզում բոլորն էլ երար հետ ազգական և խնամի են. սակայն այդ ախտը գլխաւորապէս ախտում է բուն Ղարադաղցիների մէջ, որոնք քաղաքի մեծ հարուստներն են և ազգի ընկերոջ վարձատրողները։ Սրանք էլ կամենալով, որ իրենց հարստութիւնը միշտ իրենց ձեռքում մնայ՝ միշտ խնամութիւնը երար հետ են անում, միւս կողմից էլ մի աւանդական, հայրենասէր աներութիւն տածելով դէպի բուն Թաւրիզեցի հայերը։ Եւ այս աբեհամատնութիւնից առաջ է գալիս այն ախտը երեւոյթը, որ մատաղ սերունդը վաղ վախտ է, նկատ, ընդհանրապէս Թաւրիզում, ընդունակութիւններից զուրկ, և շատ անգամ էլ խիստ տարբերութիւնների ընդհատում չարունակ ուսանում են զարոցներում, և զարոցներից դուրս գալով՝ ներկայանում են զարձեալ անգրագէտ, առանց զարգացման և բոլորովին հանրակ։

Բառատան տարուց առելի է, որ Ատրպատականի հայը զգացել է մատուռական զարգացման և կրթութեան պահանջը։ բայց այսօր ամբողջ այդ յայնմատալ երկրում չկայ մի հատ գիտուն՝ մի հայագէտ, մի լեզուագէտ, մի երաւագէտ, մի բժիշկ կատարեալ ուսմամբ և գոնէ մի իւր մայրենի լեզուին տիրուած մարդ։ Մի հասարակ նպատակ կամ վիճակական գրելու համար՝ ամիսներով մարդ են որոնում։ Չունին մինչև անգամ իրենց մի հատարակ վարժապետ։

Գերապատիւ սրբազան Մխիթարեանցը, բացի նրանցից՝ թէ որքան պատրից ախտութեան մէջ կամ միջազգային աշխարհի մէջ չանչափս բարձրացրից թեմական առաջնորդների նշանակութիւնը իւր հնգամեայ անդուլ և հզօր գործունէութեամբ, որի անուանական մեծագործութիւնները պարտք ենք համարում հրատարակել մօտ ապագայում, մեծ հարուած տուից նաև թէ առաքելական բնիկերութիւնների ազգապահաս գործունէութեան, թէ վիճակեալ հատարակական ախտերին և այժմ արմատն և քաղ հոլուի պէս անթեթի կանգնած է հետացնել իւրաքանչիւր վտանգ, որ սպառնում է ազգին և նրա բարոյականին։

Առաջնիկայ կաթոլիկոսական ընտրութեան համար արդէն Սրբազան Մխիթարեանցը պարտ ու պատշաճ գործեր հրաւանգները ուղարկած է իւր պանդան վիճակիները, որպէս զի գաւառական պատգամաւորներ ընտրեն Սրբազանի այս անօրէնութիւնն էլ գովեստի արժանի մի գործ է, ի նկատի առած, որ մինչև ցայդ Պարսկաստանում երբէք սովորութիւն չի եղել ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեանը գաւառական ժողովրդին մասնակից անել և նրա ձայնը ուղել, քանի որ այդ ընտրութիւնը սկզբունքով կոչուում է ազգային միաշաւան ընտրութիւն։ Համարձակուում ենք յուսալ, որ պարսկահայն պատիւը կը բարձրացնեն մեր պարսկահպատակ հայ եղբայրները, ընտրելով մի այնպիսի պատգամաւոր, որը յայտնի է իւր բարձր գիտքով թէ պետական աշխատանքին և թէ իւր քաղաքական նշանակութեամբ Ռուսիայում։

Մար-Ապաս.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՂԱՏԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

—

—Հակառակորդներն Կարկ քաղաքի կողմից լրներ պատգամաւոր են ընտրել Ֆրանին անունով մի լուսամասէր։

—Բերլինից հաղորդում են, որ այնտեղ հատարակութիւնը մեծ համակրութեամբ է ընդունել Վիլհելմ կայսրի հրամանը անուանակութեան դէմ մեջողներ ձեռք առնելու մասին։

—Կոպենհագենից «Figaro»-ին հեռագրում են, որ երբ թէ այնտեղ խաղաղութիւնն նոր միութիւն կազմելու խնդիր է քննուում։ Այդ միութեան մէջ մտնելու են Ռուսիան, Յունաստանը Սերբիան, Չերնագորիան, Շուէդիան, Դանիան և Ֆրանսիան։

—Կ. Պոլսից Լոնդոնի լրագրներին հեռագրում են, թէ ռուսաց դեսպանը պնդում է, որ սուլթանը իւր խոստ չեզոք գիրք բռնելու մասպրութեան մասին ապացոյցներ տայ ուրիշին և Անգլիային առաջարկէ, որ նա իւր նաւատորմը հետ կոչէ Թուրքաց ջրերից։

—Կ. Պոլսից «Dalziel»-ի գործակալութեանը հաղորդում են, որ սուլթանը կարգադրել է ոչ որի նոր պայմանագիր տալ Ասիական Թուրքիայում երկաթուղիներ շինելու, մինչև որ և է մարդ չանէն չի առնել Կ. Պոլսի և բազդատ մինչև երկաթուղու շինութիւնը։ Մի անգլիացի, Ջոն Սառնիգուդ, մի հարուստ բնիկ լինելի է կազմել։ Նպատակ ունենալով չանէն առնել այդ գծի շինութիւնը և այդ մասին արդէն գիմել է Բ. Դրանը։

—Առաջարկուած է, որ Պամիրի մասին ծագած խնդիրը փոխադարձ համաձայնութեամբ վճռուի Ռուսիայի, Անգլիայի, Չինաստանի և Աֆղանիստանի մէջ, որոնք այդ նպատակով յատուկ կոմիսարներ են նշանակելու։

—Չինաստանի Հոնկ-Կոնգ քաղաքից հաղորդում են, որ տեղացիները՝ օտարերկրացիներին արած սպառնալիք

մի հերոսութիւն չկայ և այդպիսի բարութիւններ վայելող մարդուց, գուցէ, ոչ մի շահ չկայ հասարակութեան համար՝ այդ բառը լայն մտքով առած,—բայց ճշ է մեզ համար, որ ես ինձ համար հասարակական գործունէութեան լայն ասպարէզը և սիրուած եմ իմ և բնաւնիկս սահմանական չգջանի համար միայն ասել և գործել... «Եթէ հասարակական գործոն տարրի մէջ այս րոպէիս մենք մի համակրելի, վերին աստիճանի օգտակար գաստիարդ ունենք, այդ—ուսուցիչ գաստիարդն է, որի վրայ է համարեա մեր բոլոր յոյսը»—ասում ես դու. իսկ ես էլ փոք ասում եմ.—«բայց եթէ մենք չենք ի-մանում սիրել այդ գաստիարդը, խրատել զրան և բարեբաւել զրա դրութիւնը. եթէ մենք զրան պաշտպանելու տեղ՝ կը հալածենք, բարձրացնելու տեղ՝ կը ստորացնենք և դէպի գործ զրաւելու տեղ՝ զրուելով կը հեռացնենք գործից,—այն ժամանակ զրա վրայ զրած յոյսն ապարդիւն կ'անցնի, ապարդիւն, ինչպէս ձեռքերն ու ոտները կաշկանդած, քաղցած ու նօթի մոտած գինուորի վրայ զրած յոյսը պատերազմի պաշտօն»...

Ն ա ր - Դ ա ս.

Նեբի պատճառով Բրիտանական դեսպանն և «Aspic» զինուորական նաւի հրամանատարը գնացել են փոխարքային մօտ և նրան ասել են, որ եթէ չինաց ամրոցը կամ որ և է մարդ նրա նահանգում յարձակում կը գործէ օտարերկրացիների կայքերի վրայ, այնժամակ բրիտանական զօրահակիրը նաւը կը ոչնչացնէ չինաց կառավարութեան սեպհականութիւնները և, մինչև անգամ, գուցէ յարձակում գործէ նոյն իսկ փոխարքային կալւածների վրայ։ Այդ յայտարարութիւնը չատ լաւ հետևանք ունեցաւ։ Փոխարքան իսկոյն մի շքեղաբերական հրատարակեց, որ ոչ թէ միայն օտարերկրացիների վրայ յարձակում գործելն, այլ և ապստամբութիւնն կոչող յայտարարութիւնները տարածելու համար անգամ ամէն մէկը կը գլխատուի և ամէն օր, ով ցոյց կը տայ յանցաւորին, 100 տայէլ նուէր կը ստանայ։

Վաշինգտոնից հաղորդում են, որ Հիւսիսային Ամերիկեան նահանգների և Չիլիի հասարակապետութեան միջև բնհարաւորը համարեա անխուսափելի է։ Թովալեն միջնորդութիւնը տեղեկութիւն է ստացել, թէ ամերիկեան և չիլիական նաւատորմների միջև բնհարաւ է տեղ ունեցել, որի մասին Վաշինգթոնի միջնորդութիւնն արդէն խորհրդակցութիւն է ունեցել։ Կարծում են, որ ամերիկեան դեսպանը հատուցումատար է կարգուել Չիլիի կառավարութիւնից անյապաղ գոհացում պահանջելու։ Ամերիկայի հասարակապետութեան նախագահ Կարլոսոնը, ինչպէս ասում են, յայտնել է, որ այդպիսի վարմունքն նա չի տանիլ ոչ մի երկրի կողմից։ Ամերիկեան զինուորական չորս մեծ նաւեր մօտենում նա Վալպարայզո քաղաքին Ամերիկայի պահանջներն ոյժի զօրութեամբ պաշտպանելու համար։ Ամերիկեան պահանջում է, որ Չիլիի կառավարութիւնը վարձատրութիւն տայ սպանուած ամերիկացի նաւատորմների ընտանիքներին, յանցաւորներին պատժէ և վերջապէս ինքը կառավարութիւնը նեղում լինդչէ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երևակայութեան ոյժը.— Հետևեալ դէպքն են պատմում, որ ցոյց է տալիս երևակայութեան ոյժը, մանաւանդ հիւանդ մարդկանցը։ Մօտերքս առևտրական նպատակով Բրիւսսէլ գնացին երկու լրագ անձանօթ ճանապարհորդ, երբան մեկնելն հիւրանոցում և որովհետև այնտեղ մնալն մի զատարկ սենեակ կար, ուստի երկուսն էլ մնացին այդ սենեակում։ Գիշերը նրանցից մէկը յանկարծ զարթնեց, լսելով, որ նր ընկերը սաստիկ ազաղակում է.

—Օ՜դ, ճդ։ Բաց արէք լուսամուտը խեղդուում եմ։

Աղաղակից զարթած ճանապարհորդը վեր թռաւ անկողնից, որ հիւանդի խնդրերքը կատարէ, բայց մթութեան մէջ որքան էլ դէս ու դէն ընկաւ, լուսամուտը չկարողացաւ գտնել, մինչդեռ ընկերը չարունակ ազաղակում էր՝ «ճդ, ճդ։ Վերջապէս նրա ձեռքը դիպաւ մի ինչ-որ ապակու և նա մի գարիով ջարդեց այդ ապակին։ Նոյն վայրկեանին հիւանդը հանգստացաւ։

—Շնորհակալ եմ. այժմ ազատ շունչ եմ քաշում,—ասաց նա և չուտով հանգիստ քնեց։

Առաւօտեան, լուսացաւ, երկու ճանապարհորդներն էլ զարմացմամբ տեսան, լուսամուտի ոչ մի ապակին կոտրատած չէր, այլ կոտրատած է գլխերի պահարանի ապակին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԲՈՒԿԱՐԵՍՏ, 23 հոկտեմբեր.—Սահմանի և Պաշկոնայի միջև պատահելին գնացքը գծերից դուրս ընկաւ. կամթասի պայթումն առաջացաւ. երկու վագոն այրուեց. Ճանապարհորդներից 9 հոգի սպանուեցան և 20 հոգի վիրաւորուեցան։ Խորհուրդը վիրագրում են չարամիտ մարդկանց։

ՀՌՈՄ.—Այսօր բացուեցաւ կաթոլիկական խորհուրդը։ Հանգուցեալ պապի տեղ ընտրուեցաւ կարդինալ Ռամպոլան։ Ընտրութեան ներկայ էին իտալական և օտարերկրեայ պարլամենտների 200 անդամներ։ Պատգամաւորների ժողովի նախագահը յայտնեց, որ կոնգրեսի նպատակն է գլուխ բերել միջազգային միջնորդ դատարանը, բայց այս դատարանում առանձնապէս քաղաքական հարցեր չեն քննուիլ։

Պատասխանատու խմբ. Մ. ԱԲԵՂԵԱՆ
Հրատարակիչ Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացք թիւ 1-ին գալիս է

Բաքուից, գնաց. 11 ժ. 8 ր առ.
Բագուից, « 7 ժ. 40 ր. առ.
Ելիզաւետից, մար. ապ. 8 ժ. — ր. առ.
Խանձակից, » 8 ժ. 20 ր. եր.

Գնացք թիւ 2-րդ է

Բաքուից, պոստային. 8 ժ. 40 ր. առ.
Բագուից, » 12 ժ. 8 ր. գի
Բաքուից, մար. ապ. գն. 3 ժ. 10 ր. ցե
Խանձակից, « 9 ժ 45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երիքշաբթի և չարաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երիքշաբթի օրերը։

I Ռօստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Ռոստով գալիս է 8 ժ. 48 ր. առ
Ռոստովից գնում է 7 ժ. 28 ր. ցեր

ՆԱԻԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Սև ծովի վրայ

Բաքումից գնում են՝

Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովորոսիյսկ և Սուխում։

Շաբաթ՝ երեկոյեան 8 ժամին, ուղիղ գծով, բոլոր նաւահանգիստներով։

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտաւահմանեան նաւահանգիստներ. կ. Գոլիս։

Բաքում գալիս են

Երեքշաբթի՝ կէս օրին մօտ, Օդեսայից, ուղիղ գծով։

Ուրբաթ՝ առաւօտեան Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Նովորոսիյսկի վրայով։

Կիրակի՝ առաւօտեան կ. Գոլսից Փոթիից Բաքում գնում են՝

Հինգշաբթի՝ առաւօտեան ժ. 9-ին։
Շաբաթ՝ առաւօտեան ժ. 9-ին։

Երեքշաբթի՝ երեկոյեան։
Փոթիից Բաքում գալիս են՝

Ուրբաթ և կիրակի կէս օրից յետո ժ. 2 ի մօտերքը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձական խորհրդարանում 6-ին Նոյեմբեր ամսոյ 1891 ամի, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու նոյն դպրոցի կալուածքը № 46 (ընծայած Հանգուցեալ Յարութիւն Օքոյեանցից), որ գտանւում է Կուր գետի հեղհղատի (սաղի) վրայ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան կիւանատան մէջ ամէն օր, բացի Կիւրակէից և տօներից, առաւօտեան 10-ից 12 ժամն։ 3—1

ԲՈՒՐՎԱՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՆՈՒՇԱՀՈՍ
ԱՖՈՆԵԱՆ ԽՈՒՆԿ
(ՆՈՐՈՒԹԻՒՆ)
Գումարը 1 րուբ. 35 կ.
Ր. ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ՄՕՏ
ՆԻԿՈԼԱԿԱՅԻ ՓՈՂՈՑ ՄՈՍԿՈՒԱ-Ց Ո Ւ Մ.
Վաճառւում է գաւառներում
բոլոր ամենալաւ մագազին-ներում։
(M.) 5—2.

Կօսմետիքական սպեր մայտովի երեսի
ՍՐԲԻՉՆԵՐ
Կոմպիլիա. ԷՆԳԼՈՒՆԻԻ
Սոյն սպերմացետովի սրբիչները գործածելով, երեսի մորթը մաքրւում և քնքշանում է։ Յարմար է ճանապարհորդութեան ժամանակ, երբ առաւելապէս երեսը ենթարկուած է փոշու և քամու ազդեցութեան. ձմեռը յարմար է մորթը ճաքճքուելու դէմ, որ առաջանում է ցրտից և սառնամանիքից, նոյնպէս ծառայում է բորբոքուած մորթը թարմացնելու համար և այլն։ Յարմար է հետն ունենալ։ Մի փաթեթի գինն է 60 կոպ., ճանապարհածախքով ոչ պակաս երկու փաթեթից—2 րուբ., 4 փաթեթը ճանապարհածախսով—3 ր.։
Կիզծիքից զերծ մնալու համար խնդրում եմ պահանջել ամեն մի փաթեթի վրայ Ս. Ենգլունդի ստորագրութիւնը՝ կարմիր թանաքով գրած և Պետերբուրգի կոմմետիքական լաբորատորիայի դրոշմը։
Գլխաւոր պահեստն է՝—Պետերբուրգում, Պետերբուրգի կոմմետիքական լաբորատորիա Ս. Ենգլունդի, Լիտէյնայա, 38։
(M.) 10—2.

Ա. ՌԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.
ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ
Արքունի մատակարարներ
—ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ—
ՍԱՊՈՆՆԵՐ XX դար. Սպիտակ յասմիկ Կապոյե վարդ Զերեմելնաստ Իշխանակ. ատպ. ԴՈՒԽԵՐ Յատիկ Պալբուկա կան յասմ. Սպիտակ յասմիկ Դաշտային Ճապիկ Սպիտակ Հերբեկ
ՎԱԶԱԼԻՆԻ ՍԱՊՈՆ—ՎԱԶԱԼԻՆԻ ՊՈՄԱԴ.
Վաճառւում են Ռուսիայի կայսրութեան բոլոր քաղաքներում։ Պրէյս-կուրանտն ուղարկւում է ձրի։
M. (2) 5—2.

«ԱՐԱՔՍ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԸ 1891 ԹՈՒԿԱՆԻՑ հրատարակուելու է կանոնաւորապէս Ապրիլ և Դեկտեմբեր ամիսների սկզբներում։
1891 թուականը լրանալու վրայ լինելով, «Արաքս»ը այս տարի այլ ևս հրատարակուելու չէ, ուստի ԱՅԺՄ ԲԱՑՈՒՄԱԾ Է 1892 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ։
Այս տարուան համար արդէն ստորագրուողներին կ'ուղարկուի Հանդէսը 1892 տարեշրջանին։
Փորձը ցոյց է տալիս, որ դանդաղ և անժամանակ բաժանորդագրութիւնը վնասում է Հանդիսի կանոնաւոր հրատարակմանը, ուստի բաժանորդ գրուողներից խնդրում ենք չուշացնելու, որպէս զի մենք էլ օր առաջ տեսնենք մեր պատրաստութիւնը ժամանակին հրատարակելու։
1892 թ. առաջին գրքի գեղարուեստական բաժնի մէջ մտնելու է «պատմութիւն և նկարագրութիւն Հայկական ճարտարապետութեան նկարներով Հանդերձ»։
«ԱՐԱՔՍ»-ի երեսի-չապկի նկարը փոփոխութիւն է. կրելու նկարները ասյուհետև տպուելու են աւելի գեղարուեստական ներքութեամբ և անհամեմատ գերազանց թղթի վրայ. նկարները մեծ մասամբ լինելու են գունաւոր։
Ելնել բաժանորդագրուելուց յետոյ ընթացիկ տարի առաջ, այն ժամանակ, ի նկատի ունենալով մի շարք հանգամանքներ, 1892 թուականի գրքերը ներքագրելուց յետոյ մեզ մօտից չեն ուղարկուելու։
Բաժանորդ գրուողները և «ԱՐԱՔՍ»-ի հետ գործ ունեցողները դիմելու են մեզ միշտ այս ապահով հասցէով.
բաժանորդագինն է երեք րուբլի.
Петербургъ. С. Гуламирянцу 3—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS A PAQUET ET Cie.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԴՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՔԻ ԵՒ ԸՆԿ.
Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէլից Բաթում երկու շաբաթը մի անգամ չորեքշաբթի օրերը, սկսած յունուարի 21-ից և Բաթումից Մարսէլլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Չարեք.	9/18	Նոյեմբերի	«Արմինիա» կապիտան	Թիրալ
»	20/2	Նոյեմբերի և դեկտեմբերի	«Արկատիա» »	Բոչէլ
»	4/16	դեկտեմբերի	«Անատոլիա» »	Գարբիդ
»	18/30	դեկտեմբերի	«Մինգրելիա» »	Ժիրաէն

և այդպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։
Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գնից զիջումով։
Տեղեկութիւնների և բեռների համար ճանապարհորդները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում ԳԱԲԱՆԻՈՆԻՆ, Նարբոնժանալա, Թիֆլիսում՝ ալ. Վիկտոր դ'Արնօլի, Մէջի փողոց, գներ. Տէր Աստուածատուրեանի նախկին տունն։
Բագուում՝ ալ. Սամուէլ Փիլդարեանցին, Կոլիբեակինսկեայ հրապարակում՝ Նովորոսիյսկում՝ ալ. Լուի Բենօլիե։
(233) 12—1.

Այս տեսակ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԱՔՆԵՐԻ 7-րդ գիրքը։ Խնդրում ենք ճեռնհաս անձանց նիւթեր ուղարկել մեզ հետևեալ հասցէով՝
Тифлисъ.
Т. НАВАСАРДЯНЦЪ
Городская управа.
(212) 5—5.

36—28